

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբլի.  
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ».  
Կամ Tiflis, Rédaction «Mschak».  
Տէլէֆոն № 253.

# ՄԵԼԻ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կէրակի եւ առն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է առանձին լիցիւզով.

Յայտարարութիւնների համար վճարում են  
խւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.  
Տէլէֆոն № 253.

## ԲՈՎԱՆԴԱԳՈՒԹԻՒՆ

Կարեւոր եւ պատասխանատու գործը.—ՆԵՐ-  
ՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Միջկողմանի յօդ-  
վանք. Մի գեղեցիկ օրինակ. Նամակ Ալեք-  
սանդրովիչին. Ներքին լուրեր.—ԱՐՅԱՔԻՆ  
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ֆրանսիայից. Արտաքին  
լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-  
ԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՒՆԱԿԱՆ. Ցուցահանդէսը:

## ԿԱՐԵՒՈՐ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԳՈՐԾ

Զորքը շարժւի, սեպտեմբերի 5-ին, կա-  
յացաւ կովկասեան ցուցահանդէսի զնա-  
հատողական յանձնաժողովի ա-  
ռաջին նիստը: Այդ յանձնաժողովը պէտք  
է դրադիլ ցուցահանդէսի բերված իրերի  
քննութեամբ եւ զնահատութեամբ: Գըլ-  
խաւոր յանձնաժողովը կը կատարէ իր  
գործը բազմաթիւ ստորագրեալ մանր  
յանձնաժողովների միջոցով, որոնք կազմ-  
ված կը լինեն որոշ բաժնի արդիւնքնե-  
րին վերաբերեալ մասնագէտներից եւ հը-  
մուտ անձերից: Գլխաւոր յանձնաժողովը  
իր նիստում ընտրեց այդ երկրորդական  
յանձնաժողովներին անդամներին եւ տուեց  
յանձնաժողովներին որոշ կազմակերպու-  
թեան:

Գնահատողական յանձնաժողովների կամ  
էկսպէրտային կոմիտեաների կազմակեր-  
պութիւնը ամենակարեւոր եւ ամենաէա-  
կան մասն է ամեն մի ցուցահանդէսի: Երբ  
այդ յանձնաժողովները լաւ են կազմա-  
կերպված, երբ իրերի զնահատութեան  
համար հրաւիրված են հմուտ, մասնա-  
գէտ եւ անաչառ անձինք, այն ժամանակ  
ցուցահանդէսը կատարում է իսկապէս մի  
հարցաքննութիւն եւ ստանձնում է դա-  
տաւորի պաշտօն հանդէս բերած ար-  
դիւնքների զնահատութեան վերաբերու-  
թեամբ:

Գնահատութեան բարոյական նշանակու-  
թիւնը բարձրանում է մանաւանդ այն  
ժամանակ, երբ զնահատողները իրանք ոչ  
մի կապ չունեն ցուցահանդէսի բերված ի-  
րերի հետ, իրանք անկախ եւ կողմնակի  
անձնաւորութիւններ են: Այդ է պատճա-  
ռը, որ էկսպէրտներին իրաւունք չէ  
տրված մասնակցելու զնահատող յանձնա-  
ժողովներում:

Ճանկութիւնները լաւ են եւ կազմակեր-  
պութեան հիմունքը բազմաթիւ:

## ԲԱՆԱՍԻՒՆԱԿԱՆ

## ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

### II

«Մուշտայիդ» այգուց դէպի հիւսիս-արեւելք,  
կանաչադարձ ծառուղիների մէջ ցիր ու ցան  
ընկած են զանազան տարազի, մեծութեան եւ  
գոյնի պովոյններ, մեծ ու պտտիկ շինութիւն-  
ներ: Դրանց զլխին ծածանվում են գոյնզգոյն  
զրօշակներ եւ մի տօնական կերպարանք  
տալիս ամբողջ տարածութեանը:

Գեղեցիկ մուտքից մտնում էք ներս եւ ձեր  
առաջ բացվում են նմուշներ այն ամենից, ինչ  
որ Կովկասը կարողացել է արդիւնաբերել ու  
արդիւնագործել: Ահա գիւղատնտեսութեան,  
տնայնագործութեան, օգելից ըմպելիների, մա-  
մուլի, գեղարուեստի բաժնիները: Ահա նաւթ-  
արդիւնաբերողների բաժնի, որտեղ շարու-  
նակ գործում է հոր փորող մեքենան, որտեղ  
իցից են դրված բազմազան ժողովներ, դիա-  
գնոսկեր եւ վիճակագրական տեղեկութիւննե-  
րի թերթեր: Դրա կշիռն է Նօբելի լայնարձակ  
շինութիւնը իր գեղատեսիլ պանօրամայով, որ  
ներկայացում է Սեւ ծովը:

Ահա Շաղինեանի եւ Մելիք Բախտամեանի  
պովոյնները, որտեղ ամեն օր պատրաստում  
են իւր, պանիւր եւ հումաներ: Հապա Սարաջեւի  
պովոյնը, որպիսի գեղանկար տեսարան է

Մտնում է, որ յանձնաժողովները բարեխիղճ  
կերպով վերաբերվին իրանց յանձնած գոր-  
ծին եւ կարողանան արդարացիել իրանց  
վրա դրած յոյսերը այնպէս կատարեալ  
կերպով, որպէս զի հասարակութեան մէջ  
ամբանայ եւ հաստատովի այն համոզումը,  
թէ զնահատողները կանգնած են իրանց  
կոչման բարձրութեան վրա եւ նրանց կա-  
յացրած որոշումները հետեւանք են լուրջ  
վերաբերմունքի եւ անաչառ ուսումնասի-  
րութեան:

Կնատարող յանձնաժողովների գործու-  
նեցութիւնը պատասխանատու գործու-  
նեցութիւն է. ուստի ամեն տեղ իւրաքան-  
չիւր ցուցահանդէսի ժամանակ այդ յանձ-  
նաժողովները կազմակերպվում են ամենա-  
մեծ զգուշութեամբ եւ լրջութեամբ:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՄԻԹԱՐԵԱՆԵՐԻ ՅՈՐԵԼԵԱՆԸ

(Նամակ Վենետիկից)

### II

Ինչպէս նախորդ թղթակցութեանս մէջ ըսե-  
րէի, այսօր (կիրակի սեպտ. 8), ս. Ղազար կըղ-  
զին այցելած էին զանազան տեղերից ներկայա-  
ցուցիչներ եւ բազմաթիւ ազգային եւ օտար-  
ազգի հանդիսականներ: Երազայի հայ ուսա-  
նորդութիւնից մասնակցում էր Հայդերբէրգ,  
դրկեով երկու պատգամաւորներ:

Առաւօտուն ս. պատարագի արարողութիւնը  
կատարեց գերապայծառ արքայադէմ Ս. Իգնա-  
տիոս վ. Կիրեղեան: Զեմ կարող բացատրել  
թէ արքան Իգնատի կերպով երգեցին այն իր-  
ապագի երիտասարդները, որոնք մասնաւոր  
պատասխատված էին այս օրվայ համար դաշ-  
նակի, ջուրթակի եւ այլ զանազան գործիչների  
ընկերակցութեամբ: Եթէ ինչ չափէն, որ նը-  
րանք իտալացիներ են եւ հայերէն մի բառ էլ  
չեն իմանում, եւս պիտի ասէի, թէ մեր հայերը  
կարող են մրցել ամենից նշանաւոր երգիչների  
հետ: Եւ ինչպէս տարակուսէի, քանի որ կա-  
նօնաւոր եւ անօթալ կերպով արտասանում  
էին մեր դժուարահնչիւն տառերն իսկ: Երեւի  
այս երիտասարդների համար դիւրութիւն ըն-  
ծայողն էր այն պարագան, որ իրանց առջեւ  
դրված տեսարաններն էին Բիւնաբիլի նշանա-  
ւոր երգահանի եւ պ. Եկմարեանի աշխատու-  
թիւնների ձուլումից գոյացած մի նոր, բայց  
իրական հայկական-եւրոպական երգեցողու-  
թիւն:

Ներկայացնում, մանաւանդ գիշերը: Միւս պա-  
վիթներն էլ լրացնում են այդ ընդհանուր  
խայտաբղէտ տեսարանը եւ մի առանձին գրաւ-  
չութիւն պարգեւում ամբողջ ցուցահանդէսին:

Գեղեցիկ է ցուցահանդէսը եւ գիշեր ժամա-  
նակ: Զեմով խուռն բազմութիւն, էլէքտրական  
լուսով ազատ լուսաւորված ծառեր, ծաղկա-  
մարգեր, շատրուաններ ու պովոյններ, Սիմէն  
եւ Գալսէի ընկերութեան պովոյնը զարդարող  
բազմաբանգ էլէքտրական ճրագներ—այն ցու-  
ցահանդէսի գիշերային ընդհանուր տեսարանը:

Բայց այդ պատկերը լրացնելու համար պէտք  
է աւելացնել նաեւ զինւորական օրկէստի,  
դափ ու նաղարայի, դժու-զուռնայի երաժշտու-  
թիւնը, լեռնականների լեզվիկան, թատրօնա-  
կան բաժնում մերթ ընդ մերթ կրկնվող հայ-  
կական, վրացական, մալթոսական համերգները,  
մերկաթե ու մերկապուրծ շանսօնականների  
մղկտոցն ու ոտնձգութիւնները...

Զէ, արժէ գէթ մի անգամ տեսնել այդ ա-  
մենը:

### III

«Եթէ ուզում էք մի օր եւ երկրի քաղա-  
քակրթութեան մասին գաղափար կազմել,  
ասում է յայտնի գրականագէտ Գ. Բրանդէս,\*)  
թերթեցէք նրա գրականութիւնը, եթէ ուզում  
էք իմանալ մի օր եւ ժողովրդի մտաւոր ու  
նիւթական պահանջները, հետեւեցէք նրա մա-  
մուլին...»

Եւ շատ իրաւացի է այդ հայեցակէտը. իւ-

\*) G. Brandes; «Moderne Geister».

Պատարագից յետոյ, ներկաների համար դըր-  
ված սեղանի վրա, բաժակաճառերի դուռը  
բացաւ Վենետիկի պատրիարք, ծիրանաւոր  
(կարդէիս) տ. Զուգէպպէ Սարաո, որ այսպէս  
վերջացուց.—«Հայաստան մեր ամենուս հայ-  
րենիքն է»: Այս ճառին պատասխանելով ար-  
քայայրն ասաց, թէ.—«Վենետիկ ալ մեր երկրորդ  
հայրենիքն է»: Յետոյ զանազան տեղերից հասած  
բազմութիւ հեռագիրներ եւ նամակներ կար-  
դացուեցան, որոնց ըզմանակութիւնից իմա-  
ցուեցաւ, որ ամբողջ հայ ազգը ցնծութեամբ  
կը մասնակցի Միջկողմանի հայրերի այս տօ-  
նական հանդէսին: Եւ պէտք էր,—նոյն իսկ  
շատ ուշ մնացած.—յայտնել մեր բոլորիս ան-  
կեղծ զգացումներն ու համակրութիւններն այս  
օրինակից հայրերի երկհարկաբանայ վա-  
տակների փոխարէն: Ինչ զիւրթական զաւազան  
կայ, չը գիտեմ, այս կղզեակին վրա, որ ընդհա-  
նուր հայութիւնը կապած է իրեն հետ. ար-  
դեօք Միջկողմանի հողին է, որ սաւառնում է  
ս. Ղազարից էլմիածին եւ Սեբաստիայից դէ-  
պի Սեւան:

Բուն ծափահարութիւններով ընդունվից  
Վենետիկի ներկայացուցիչ Գէորգ սրբազան  
Իւթիւճեանի հակիրճ բարեմաղթութիւնը, ո-  
րից յետոյ մեր սիրելի Նահապետը զողջուն  
ձեռքով իր զաւաթը բռնած մեկնեց դէպի Իւ-  
թիւճեան սրբազան եւ առաջարկեց «Հայոց  
Հայրերի կենացը». սրբազանն էլ իր կողմից  
ըստեց՝ «Հայոց Նահապետի կենացը»: Այս մի-  
ջոցում բուն ծափահարութիւններին խառ-  
նուեցաւ «Գեղեցիկ Հայոց Հայրերը» ցնծայից ա-  
ղաղակը: Խօսեցան նաեւ Ռուսական գերապայ-  
պայծառ, Տ. Սուքիաս վ. Պարոնեան, Թէոդո-  
րոս քահ. Զուգայան եւ ուրիշներ: Հ. Պարո-  
նեան հանձնարեց դատողութիւն մ'ըրաւ՝ նմա-  
նելով այս սեռազգեստ կրօնաւորները գետնի  
տակ պահուած սեւ ածուխի, որ իր արտաքին  
տեսքն հակառակ՝ իր մէջ ունի մի կենսա-  
տու գործիւն եւ որ կրակի փոխուելիս  
գործում է հրաշալիքներ: Եւ էլ, ասաց, այն կրա-  
կի միջից դուրս եկած մի փոքր կաշիքն է, կաշի՝  
որ ծառայում է բոցավառելու ուրիշներին:

Երեկոյին ներքին պարտէզը լուսազարդվեց  
վենետիկեան գոյնզգոյն լապտերներով: Մու-  
րատ-Ռափայէլեան վարժարանի եւ Պատուայի  
համալսարանի աշակերտները, վաճիկ աշակերտ-  
ները նաեւ միացած, զանազան ուրախութիւն-  
ներ կատարեցին:

Կ. Յ. Բաւաճեան

## ՄԻ ԳԵՂԵՑԻԿ ՕՐԻՆԱԿ

(Նամակ Իմպերիալիստից)

Յայտնի է, որ օգոստոսի 19-ին Պետերբուր-  
գում այրվեց Փոքր Թատրօնը, որտեղ խաղում  
էր Գրականական-Գեղարուեստական Ընկերու-  
թեան խումբը: Թատրօն պահող ընկերութեան  
բաժնետէր անդամները բացառապէս ինտելի-  
գենտ մարդիկ են եւ դրանց զուլի կանգնած  
է պ. Սուլօրին: Թատրօնը այրվեց այնպիսի մի  
ժամանակ, երբ բոլոր դերասանները արդէն  
վարձված էին եւ խումբերը կազմակերպված,  
այնպէս որ մօտ 200 մարդ պէտք է մնային ա-  
ռանց գործի, առանց ապրուստի, մօտ 9 ամիս,  
եւ ընկերութիւնը բարոյական եւ օրինական  
իրաւունք ունէր մերժելու խմբին, որովհետեւ  
թատրօնը զոհ է գնացել հրդեհին:

Դերասանները եւ թատրօնի բոլոր ծառա-  
յողները դիմում են ընկերութեան նախագահ  
Սուլօրինին՝ խնդրելով, որ չը թողնեն անգործ  
այդքան մարդկանց եւ խոստանում են իրանց  
կողմից գիշել 25% ոռնիկներ:

Ընկերութիւնը սկսում է բանակցել Պանսե-  
վի թատրօնի կառավարիչների հետ: Այս թատ-  
րօնի դերեկցիան պահանջում է թատրօնի վարձ  
27,000 ռուբլի, յետ կանգնելու համար՝ 25,000  
ռուբլի եւ բացի դրանից՝ 50,000 ռուբլի, իբրեւ  
ապահովութիւն արդէն հրաւիրված թատրօ-  
նական խմբի համար: «Բարդ եւ ծանր պայ-  
մաններ», ասում է «Театръ и Искусство» շա-  
բաթաթերթը:

Եւ ամենքը համոզված էին, թէ անկարելի է  
102,000 ռուբլի վճարել միայն վարձ թատրօնի  
Բայց ընկերութիւնը վճարեց: Դեռ այդ քիչ է.  
ընկերութիւնը հրաժարվեց դերասանների ա-  
ռաջարկած 25% զեղչից եւ յանձն առաւ սալ  
նրանց ամբողջ ոռնիկները:

Գեղեցիկ օրինակ նրանց համար, որոնք  
5—6 հազար վնասվելով ազգային թատրօնում,  
կարծում են թէ առանց վնասի թատրօններ  
չառ կան...

Sapienti sat!

Դերասան Գ. Պետրոսեան

## ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎՈՒՅՑ

### Սեպտեմբերի 3-ին

Երէկ, ամսիս 2-ին, քաղաքային կուբի ձմե-  
րային դահլիճում, դերասան պ. Ստապլը մի  
երեկոյթ տուեց ի պատիւ Միջկողմանի միա-  
բանութեան հիմնադրութեան 200-ամեակի:

վրա է կանգնած:

Դժբաղդաբար ցուցահանդիսի այդ բաժինը  
ցանկալի կազմն ու ծաւալը չունի եւ անկարող  
է մեր երկրի քաղաքակրթութեան առաջնորդ  
որոշել, որովհետեւ պակասում են վիճակա-  
գրական տեղեկութիւնները, պակասում է գըր-  
քերի յատուկ բաժինը: Սակայն «ЧѢМЪ БОГАТЪ,  
ТѢМЪ И РАДѢ», ասում է առաջ առածը. ուրեմն  
դիտելը եղածը:

Այդ բաժինը ներս մտնելուն պէս ձեր աչքին  
ընկնում է մի փորագրի պատկեր, որ ներկա-  
յացնում է մամուլի էմբլէման: Պատկերի մէջ  
տեղում կանգնած է հրեշտակ—մէկ ձեռքում գրիչ  
բռնած, իսկ միւս ձեռքը բաց զրքի վրա դրած:  
Նրա ոտների մօտ թափված են գրքեր եւ  
դափնի պսակներ, իսկ դրանց մօտ կանգնած  
է իմաստութեան նշանաւորը—բուն: Պատկերի  
չորջը, պատկերի վրա, դասաւորված են լուսա-  
նկարչական պատկերներ ու թերթեր: Բայց  
դրանից անհետկում կան նաեւ առանձին ար-  
կղիւններ ու պահարաններ: Տեսնենք ուրեմն  
դրանց բովանդակութիւնը:

### IV

Մուտքի հանդէպ մուգ-կարմրագոյն էկրանի  
վրա գեղանկար ձեւով դառաւորած են «Каз-  
на» պաշտօնական թերթի զանազան հրա-  
տարակութիւնները, նրա իւրաքանչիւր նոր  
չրջանի առաջին համարը եւ մի ջրանի պատ-  
կերներ, որոնք պատրաստված են յատկապէս  
յօրելու համար:

Ինչպէս յայտնի է, ներկայումս կովկասում

\*) «Magazin d. Litteratur» 1900 № 7.

6. P.

# ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՅԲԱՆՍԻԱՅԻՑ

Պարիզ, սեպտեմբերի 2-ին

Մխիթար Աբաբայի երկհարկաբանայ յօրհանին՝ Պարիզի ալ մասնակցելու մտածունքն ունեցաւ։ Պարիզի հայերն ալ վերջապէս յիշեցին թէ կարելի է քիչ մը աւելի լուրջ խնդիրներով զբաղվիլ։

Անտարակոյտ զիւրի գործ մը չեղաւ այդ մասնակցութեան խորին հարցը լուծել։ Բայց պիտի զրկուէր, ինչպէս պիտի զրկուէր։ Ահաւասիկ խնդիրներ, զորս խնդրելի մը, սուսիկ-փուսիկ լուծելու համար բաւական արիւթիւն պէտք էր։ Կիրքերը, հակառակութիւնները, վիճաբանութիւնները, բարձրագոյնը Պարիզի հայուն հայն ու ջուրը դարձած են։ Պարիզի հայը ամեն բան սիրով կը մոռնայ, ազգին չափը, իր չափը՝ միայն թէ կարողանայ մէկու մը դէմ, գործի մը դէմ ցածութիւն ու բնիկ ջարհոտութիւն բան մըն է ասիկա, բայց իրողութիւն է։ Այսօր այս գեղեցիկ ու սրբապաշտ ինքնին վրա զրկուեալ միտք չունիմ սակայն։ Գիշտ տեսնէմ անոր պիտի անգրաւ դառնաւ։ Կուտ մըն ալ սպասեցէք, մեծ բան չէք կորսնցնել։

Կրօնի թէ Պարիզի գաղթականութիւնը որոշեց Վենետիկի մէջ կատարուելիք յօրհանական հանդէսներուն մասնակցել։

Ոսոք կար ճիշտապէս՝ հանդէսի խմբագիր պ. Բասմալեանը զրկել ա. Ղազարի վանքը։ Դրկելով, լաւ, բայց ճամբու ծախք։ Ա՛, ճամբու ծախք ալ կայ։ Աս ինչ տարօրինակ բան։ Երբ մարդ վերջապէս իր սիրական կոնքները մէկտեղ ցնելով՝ (օ, վարկեանի մը համար միայն) կուգէ ասանկ ու եւ գործ մը զրուի հանել, անոր առջեւ ալ այսպէս արգելքներ կը ցցուին, ճամբուն վրա յանկարծ տնկուող աւազակներու պէս։

Եղբայր, յօրհանի մասնակցելու սա փութ մտքն չէնքով չորհրդով վազ անցնինք, ինչպէս կըլլայ։ Մեր ինչուն պէտք այս տեսակ զոտար խնդիրներուն մէջ մտնել։ Մասնաւոր որ ասկէն ինչ օգուտ։ Պատգամաւոր մը աւելի, պատգամաւոր մը պակաս գնացել է, ինչ վաւ։ Մխիթարեանները գիտեն, որ ամբողջ ազգը իր մտքով ու իր սրտով իրենց հետն է այս հանդիսական օրերուն մէջ։ Ուրիշ խնդիր՝ եթէ պ. Բասմալեանը յանձն առնէ մեր կողմէն Վենետիկ երթալու իր ծախքով։

—Գէշ խելք չէ աս. առաջարկենք անգամ մը պ. Բասմալեանին։

—Ինչ կըսէք, բարեկամ, ինչ կըսէք, ըլլալիք բան չէ ատիկա. պ. Բասմալեանը իրեն անհրաժեշտը չունի։ Ելեր, դուք ալ ուրիշ բնուկաւցէք իր ուսին։ Այստեղ Վենետիկի վանքին մէջ ուսում առած կարգ մը վաճառականներ կան. ինչու անոնց չը դիմենք. հարկաւ ուրախութեամբ իրենց երախտագիտութեան պարտքը պիտի ուզեն հատուցանել այս պարագային։

Ու կը դիմեն վաճառական Ա.ին, Բ.ին, Գ.ին։ Ամենին ալ իրենց ճիշտագիտութեան պարտքը կամապարեն վճարել... Ծաւական ֆրանկ տալով։

—Բնականաբար խնդիրը քայլ մը առաջ չեղար, եթէ վանքէն երախտագիտութեանը, որոնք հարուստներ են, իրենց քսակին կողովը ուժով ուժով գողցն։

—Այս խնդիրը գլուխ հանադններուն մէջ մէկ խնդիր մըն ալ չէ։ Ինչու մեր հարուստներուն կը դիմէք ճամբու ծախք ուզելու համար։ Անոնց քսակին բերանը յորանջել տալու միակ, ապահով միջոցը սա է. օրինակ, կը ներկայանաք պ. Բ.ին ու կըսէք։

—Ազնուաշուք տէր, մտադրութիւն ունիմ Պարիզի մէջ թերթ մը հիմնելու. դժբաղդաբար, պէտք եղած դրամագումար չունիմ. քաջ ճանաչալով ձեր ազգասիրական զգացումները, ձեր առատաձեռնութեան կը դիմեմ...

—Աղէկ, աղաւ, բայց ինչ է նպատակդ. Պարիզի մէջ հրատարակվող քանի մը լրագիր ունինք արդէն։

—Ազնուաշուք տէր, այդ լրագիրներուն խմբագիրները ազգային դատին ծառայելու բացարձակապէս անկարող մարդիկ են. ամենքն ալ գողեր, աւազակներ, խաբուսներ, դաւաճաններ, չղջղորդներ են։ Ես կարող եմ հրատարակել այնպիսի թերթ մը, որ ազգային արժանապատուութեան դրօշակը բարձր բռնէ... —Ապրիտ, աղաւ, ապրիտ, եթէ անոնց միայն, մենք կորսուած ազգ մըն ենք. մեզի անձնուէր մարդիկ պէտք են, որ շիտակին շիտակ, ծու-

ռին ծուռ բռնէ. աֆերիս, աղաւ, աֆերիս. ասա գուճարը ու ազգին արժանապատուութեան դրօշակը բարձր բռնէ. հա՛, ան չէ ամա, չը վշտանաւ, քեզ՝ թէպէտեւ տարիքդ առած կարգուած մարդ՝ «տղաւ» կոչուելու, գիտես թէ ատիկա իմ քեզի նկատմամբ ունեցած համակրութեան մէկ ապացոյցն է...

—Ազնուաշուք տէր, ինչ կըսէք, քաւ լիցի եթէ վշտանամ, այդ ամալանը աւելի կը պատուէ զիս. եւ յետոյ դուք բարեգութ հօր մը պաշտօնը չէք կատարել մեզ մեր ազգագուտ գործին մէջ քաջակերելով բարոյապէս եւ նիւթապէս, մանաւանդ, ա՛, նիւթապէս, այի, դուք մեր առատաձեռն ու բարեգութ հայրն էք։

Երեւանին մասնակցութեան խնդիրը այս ջուրին վրա էր, երբ մէջ մըն ալ լսեցի, թէ Պարիզի հայերը ոչ միայն մէկ, այլ երկու հոգի կուղարկեն ա. Ղազարու վանքը՝ պ. Բասմալեանը եւ Սուքիաս վարդապետ Պարոնեանը։

Շիտակը բռնելը չը կայ աս Պարիզի հայերուն։ Պ. Բասմալեանի եւ հայր Պարոնեանի հետ, որոնք արդէն մեկնած են դէպի Վենետիկ, Եւրոպայի հոգեւոր հովիւ Ի. Թիւրքեանն եպարկայացնելու համար Աբաբայի երկհարկաբանականին։

Մինչդեռ Պարիզի հայ գաղթականութիւնը ներկայացուցիչ մը զրկուելու համար գլուխը քարէ քար դարձաւ, ու յետոյ շուտորոշեցող պատուաւ նախանձանդներութիւնով (?) մը երկու հոգի զրկեց, անդին, պ. Բաշինջաղեան, լուի մընջիկ Վենետիկի Մխիթարեաններուն իր յարգանքի հարկը մատուց շատ յուզիչ եղանակով։ Իր էն գեղեցիկ ու էն այտալայտիչ նկարներէն մէկը՝ Սեւանյա լիճը՝ նուէր զրկել վանքին։ Ինչի ապագա կը թուի, թէ երկուսը կուտրուած ու օտար հողի մը վրա աշխատող այդ վանականներուն՝ երկրին մէկ սիրուն ու յատկանշական անկիւնը ներկայացնող այդ նըկարը ուղարկելով՝ պ. Բաշինջաղեան խորապէս յուզող ու մարդկային գործ մը կատարեց։ Սեւանյա լիճը՝ այդ կամաւոր աւարտականներուն հօրապէս պիտի յիշեցնէ, թէ անոնք հայրենիք մը ունին, որ զիրենք չէ մոռցած ու իր աչքերնեք սրտադողով յառած է անոնց գործունէութեան։ Անիկա՝ ամբողջ հայութեան կողմէ գացող պատգամաւորներին շատ աւելի պերճախօս կերպով պիտի խօսի անոնց արտին, եթէ անոնք երկարատեւ պանդխտութեան մը մէջ, հողին ցնցող ու խանդակոխ ձայնին օտարութիւն չեն դարձած, բան մը, որուն վայրկեան մը նոյն իսկ չենք կրնար հաւատալ—տակարին երէկ կարգադրելու Անարոնեանի տաք ու սրտաբուլի տողերը։

Նկարին ճամբայ ելելէն առաջ, վերջին անգամ մըն ալ զիտեցի զայն։

Լիճը խաղաղ է, մեռած ըլլալու աստիճան խաղաղ։ Հեռուէն կողմին կը նշարուի մութ ու վիթխարի քնացող ջուրերու կապոյտ գանգ, զոտածին մէջ։ Ափերէն մէկուն վրա նիհար լոյս մը կը զողջողայ ու այդ միջոցին խաւարը կը ծածկէ, որովհետեւ գիշերուան ատուերները՝ լայն ու խորհրդաւոր՝ եկած են արդէն կողմին ու լիճին վրա։ Երկնային թաւիշը ծածկուած է ամպերու հսկայաբերձ կուտակումներու տակ, որոնք միջնօրորոյն մէջ անշարժ լինելու պէս կը կախուին, իրենց չուքը միմեկմիմեկ ջուրին խորքը։ Լուսինը լիաշուրթն ու կաւ կարմիր՝ նոր ծագած է ու ամպերու խոշոր պատուածքէ մը հեղուկ հայելին վրա կիսնայ գաղտուկ, խորունկ գգուանքներով։

Ու այս ամենուն վրա կը ծածանի խորաթափանց անդորրութիւն մը, գիշերուան միապաղաղ, բարի անդորրութիւնը որ օրուան աշխատանքէն բոլոր յոգնածները կը հրաւիրէ ինքնամոխիտութիւն, լուռ հայեցողութեան։

Ահաւասիկ այս նկարն է, որ երկրին ողջոյնն ու յիշատակը պիտի տանի Մխիթարեան հայրերուն։

Ու ցնծութեան եւ ամօնի հանդէսներէն ետք, երբ հայութեան բոլոր ներկայացուցիչները դառնան իրենց տեղը, անիկա միայն պիտի մնայ իրենց քով, իրեւ. երկրին չարչրկուած հոգին, տառապած ձայնը։

Տիգրան

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՐ

— Բօլոնու, երգուեալները դատարանում, վերջապէս, սկսելուց «մաֆիայի» պարագայուն Պալիցցոյի գործի քննութիւնը։ Պալիցցոյ մեղադրում է Նոտարբարտօյին սպանելու համար, որ մի ժամանակ Պալիցցոյի քաղաքագետ էր եւ սփիւրիական բանիկ զիւրիկաւոր։ Բայց արանից Պալիցցոյ մեղադրում է եւ ալ յանցանքների համար։ Նրա վերջին

գործը, Նոտարբարտօյ, սպանվեց 1893 թ. փետրվարին։ Կատարուեցին բոլոր նախքերը՝ գտնելու յանցաւորներին եւ պատժելու նրանց՝ ապարդիւն էին դուրս գալիս, որովհետեւ ամենագործ «մաֆիան», սարսափ գցելով ամենքի վրա, «հեռացնում էր գործից» անյարմար մարդկանց, յափշտակում էր ամենաէական դոկումենտներ միմեկին։ Անգործութեան էր դատապարտվում չնորհիւ «մաֆիայի» ձեռք առած միջոցների, որ թէեւ ամբողջ Իտալիայում անտեսանքով էր լինում Պալիցցոյի վրա, որպէս Նոտարբարտօյին սպանողի, բայց այս վերջինը ազատ չըլլում էր ամեն տեղ եւ մինչև անգամ ժառանկուցում էր պատգամաւորների ժողովին, որպէս այդ ժողովի անդամ Պալիցցոյ ընկաւ արդարադատութեան ձեռքը՝ չնորհիւ միայն սպանված Նոտարբարտօյին որդու անտեսման ետանդին։ Բայց նրանից յետոյ էլ, երբ յանցաւորը բանտարկվեց, անցաւ համարեա երկու տարի, մինչև որ պորթը հասաւ հրապարակական քննութեան, եւ այն էլ ոչ Սփիւրիայում, այլ Բօլոնու, որպէս զի երգուեալները ազատ լինեն «մաֆիայի» ճնշումից։

— «HOBOTTA» լրագրին հաղորդում են, թէ Սան-Բեճոյում, Իտալիայում, հիմնվում է մի սանատորիա ի յիշատակ վախճանված Մեծ-Իշխան Ալեքսէ Մխիթարովիին։ Այս սանատորիայում կընդունվեն բացառապէս ուսու հիւանդներ։ Սանատորիայի շինութիւնը նստել է 60,000 ռուբլի։ Ի նկատի կայ երեք մահճակալներ յատկացնել չքաւոր հիւանդներին, որոնցից մէկի ծախքը յանձն առնել սանատորիայի վարչութեան կողմից առաջարկված է Մօսկվա քաղաքին։

— «Gazette de Lausanne» լրագրում է հետեւեալ հետաքրքրական մանրամասնութիւնները։ Եւրոպայի ամենաառաջին հանրապետութեան, Սան-Մարինոյի, 16-րորդ հարիւրամեայ յօրհանի առթիւ Սեպտեմբերի 2-ին եւ 3-ին, ասում է այդ լրագիրը։ Եւրոպայի ամենափոքր պետութիւնը, Սան-Մարինոյի հանրապետութիւնը, ցնծութեամբ օտնուէր էր այն օրվայ յիշատակը, երբ նրա հիմնադրին եւ հոգեւորաբար, քարտաշ Մարինուս, Դաւիթաթեմից եկաւ Տիտան սարը եւ հիմնեց այնտեղ մի փոքրիկ քրիստոնէական հանրապետութիւն, որ այն ժամանակից մինչև այժմ չէ դադարել անկախ եւ ազատ լինելուց։ Դա Դիօկղետիանոս կայսրի հալածանքների ժամանակն էր։ Մարինուս ընկալութիւն հաստատեց սեպտեմբեր 2-ին իրաւ, որովհետեւ կարող էր շարունակել պարագիծ իր արհեստով եւ մի եւ նոյն ժամանակ պաշտպանվել իր ընկերների հետ։ Ժայռերի մէկի կատարին նա տնկեց մի առաջին խաչ։ Նրա շուրջը սկսեցին խմբել հոգեւորական, համարելով Մարինուսն սուրբ եւ ընդունելով նրան իրանց գլուխ։ Նա ջարդուում էր աւետարանը, որտալից ճառեր էր արտասանում։ Եւրոպայից անհասարակութեան եւ այն չընդունութեան դէմ, որի մէջ ապրում էին կայսրները։ Նա ասանմանց օրէնքներ, որոնք հիմնված էին ազատութեան եւ հասարակութեան սկզբունքների վրա։ Այժմ նրան փառաբանում են Ռոմիւլի եւ Նոմալի հաւատարմ. Բայց պետութիւնը, որ նա հիմնեց, ապրում է աւելի երկար, քան հին Հռոմը, եւ ոչ մի նշան չը կայ, որ ցոյց տար, թէ նա չուտով անպայմանաւոր է։

— Մուշուկ հայերի կոտորածի մասին տալիք լուրերը հաստատվում են։ Թիւրքական շրջաններում հաւատացնում են, որ հայերը իրանք ապստամբվեցին եւ աշխատում էին հողեկն թիւրքաց թաղը քաղաքում. այդ բանը իբր թէ ընդհարում առաջ բերեց նրանց եւ թիւրք գործերը միմեկ, եւ հայերը փախան դէպի Սասուն։ Մէկ ուրիշ տեղեկութիւն, նոյնպէս թիւրքաց աղբիւրից, ասում է, որ հայերը կանխում էին օդը թոցնել թիւրքաց զորանոցը նրա մէջ գտնվող զինւորներով։

## ՄԵՍԿԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

5. սեպտեմբեր

ՊԱՐԻԶ, Պաշտօնապէս Գնեմբալ Գորբիզէ, 16-դ զորաբաժնի հրամանատարը Մօսկվայէն ում, նշանակված է Պարիզի գիւնտրական նախագահութեան, գնեմբալ միջոցների տեղ, որը արդէն հասել է ծերութեան այն հասակին, երբ այլ եւս չէ կարող ծառայել։

Դիւրեւի՞նք։ Երկուսերի հոսանքը ահագին է, եկան էլի հազարաւոր ճանապարհորդներ։ Վերջին գիւնտրական զորարարը, բայց հիւսնային քամին շարունակում է ստատիկ փրչել։ Մօս 6 ժամին, այն անձինք, որոնք պէտք է «Կասսինի» վրա լինեն, սկսում են սակաւ առ սակաւ դալ ծովափը նստելու համար։ Դրանք են—Ֆայիլի, Դէլանդ, միմեկին, կոմս Մօնտէրէլլո, ծովագետներ Ժերմէ, Ֆուրբի, Գիւլման, Բիւնէմէ, գնեմբալ Լիւկա եւ ուրիշները։ Լուրէ ժամանեց 7 ժամ 10 րոպէս, ողջունվելով ամբողջ կողմից եւ առաջինը մտաւ «Կասսինի», որի վրա բարձրագոյն նախագահական զրօշակ։ Նրան հետեւեցին պաշտո-

նական անձինք, որից յետոյ նաւածիգ նաւը հասցրեց «Կասսինի» աւազանի սահմաններից դուրս։ Ազգաբնակութիւնը խռնվում էր ծովափի շուրջը, ուրախ բացականչութիւններ արձակելով։ Սկսվում է թնդանթաճութիւն։ Երկու գծերից բաղկացած նաւերը, իւրաքանչիւրի մէջ վեց ականանաւեր, չըլապատում են «Կասսինի», որը կամաց-կամաց առաջ է շարժվում։

ՊԱՐԻԶ, Պարիզի բոլոր հրապարակական արձանները կը լուսավառվեն երեկոյան։ Մասնաւոր շատ տներ նոյնպէս զարդարված են զրօշակներով։ Ուտիկանական պրէֆէկտի հրամանով, սեպտեմբերի 3-ին, բոսան կը փակվի զորահանդէսի պատճառով Բէտէնիում։

ԴԻՒՆԿԻՐՈՒՆԸ։ Առաւօտեան 10 ժամին լուկեց սաստիկ թնդանթաճութիւն ծովից։ Նդանաւոր բարեկամը էր. արեգակը սկսում է լուսաւորել։ Ամբողջ ազգաբնակութիւնը խռնվում է ծովի ափին։

ԴԻՒՆԿԻՐՈՒՆԸ։ Վերջին օրերս անսովոր կենդանութիւն է տիրում Դիւնկիրոյնում։ Նաւահանգստի մօտ բազմաթիւ զբոսաւաւոր եւ մականիներ ուսական գոյնի զրօշակներ ունեն։ Նրանք բերել են մասնաւոր անձանց, ինչպէս լուր տեղատարափ անձրեւին եւ աւարափելի քամուն, որպէս զի հեռուից տեսնեն Ռուսաց Կայսերական Չոյզի ժամանումը։ Նաւահանգստի շրջակայքում նշանաւոր ամբողջ դեռ գիշերվանից գրաւել է տեղեր։ Բոլոր պատուականները եւ պաշտօնականները լցված են մարդկանցով։ Քաղաքում տները զարդարված են ծաղկափնջերով եւ զրօշակներով։ Ռուսաց Կայսերական Չոյզի ֆրանսիական շրբին մօտենալու ժամանակ սարսափելի հիւսիսային քամին դադարեց եւ երկինքը, նայածաւ արեգակից լուսաւորված, արտափայլում էր բոլոր ֆրանսիացիների արտերի ուրախութիւնը այդ պատմական անցքի պատճառով։ Ռուսաց Կայսրը եւ Կայսրուհին ժամանեցին լուսաւորին։ Բոլոր զինւորական նաւերը վրա բարձրացրեցին զրօշակներ ժամը 7-ին հանաւորապետութեան նախագահը, ուղեկցութեամբ սենատի եւ պատգամաւորների ժողովը նախագահների, Վալդէ-Լուսոսի, Դէլանդի, Ժերմէի եւ Ռուստան ծովագետների, ծովային կցորդ Եպանիմի, նստեցին «Կասսինի» հակա-ականաւաւի վրա, որին հետեւում էին ասանակերկու ականանաւեր եւ ընդ առաջ գնացին Կայսերական զբոսանաւին։ Նաւահանգստի մոտեցից հինգ մղոն դէպի արեւմուտք, Դիւնկիրոյնում կենտրոնացած ֆրանսիական զարմանալի ծովային օճերը, բաղկացած վեց զրահակիրներէր, երկու զրահակիր կրէյտներէր, չորս ծովափային նաւերից, երեք հակա-ականանաւերից, երկու ուղիւնոսական ականանաւերից եւ տասերկու ականանաւերից, հոյակապ պատկեր էին ներկայացնում։ 10 ժամ 35 րոպէ էր, երբ հանդապետութեան նախագահը եւ Ռուսաց Կայսերական Չոյզը հանդիպեցին։ Շատ օրտաւ զին կերպով ողջունելով Ռուսաց Կայսրին եւ Կայսրուհուն, նախագահ Լուրէ անցաւ «Շատաւորա» նաւը եւ երբ սկսվեց երկու շարք կանգնած զինւորական նաւերի նաւահանգէնը, Ռուսաց Կայսերական Չոյզի երեւալու ժամանակ, ողջունելով թնդանթաճութիւն տեղի ունեցաւ 101 անգամ։ Երբ Ռուսաց Կայսրը անցնում էր նաւերի առջեւ, երաժշտական խմբերը անում էին Ռուսաց օրհներգը եւ իւրաքանչիւր նաւի վրա գտնվողները օդը թնդանթաճ էին «ուրախ» աղակալի աղաղակներով։ Ֆրէյսինէ ծովափի նաւահանգստի մօտ, որը շատ չեղք զարդարված էր, սպասում էին բոլոր ֆրանսիական միմեկինները, կոմս Լամարգորֆ, զեպան իշխան Ուրուսով, զեպանութեան խորհրդական Նարիշկին, Ռուսաց հիւսպատոս բարոն Ֆիտինգօֆ, պատգամաւորները, սենատորները, ծովագետները, Դիւնկիրոյնի մէջ եւ Կայսերական Չոյզին ողջունելու համար բէլգիական թաղաւորը ուղարկված արտակարգ զեպանութիւնը։ Երկու ժամն էր, երբ օդը ցնցող «ուրախ» ուղեկցութեամբ Կայսերական Չոյզը ափ իջաւ եւ հանդապետութեան նախագահի, միմեկինների, ծովագետների եւ բարձրագոյն ճանապարհորդների, ծովագետների եւ տեղական իշխանութիւնների եւ պատգամաւորութիւնների ներկայացնելուց յետոյ, տեղի ունեցաւ հանդապետութեան նախագահի ուղարկված շնորհակալութիւնը։ Դրանից լուրում էին մարդկանց անհամար բազմութեան ցնծալի բացականչութիւնները։ Գեցցէ Կայսրը, Գեցցէ Կայսրուհին, Գեցցէ Ռուսաստանը։

Электротечатня Грузин. Изд. Т—ва, Б.-Ванкокая ул.